

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՆՁՐԵՎ

Երբ մարդկության խորթ բարքերը անհետանան ամենուր,
Եվ բնության օրինակով դաշն տիրի ընդհանուր,
Նպատակի բարձունքները նվաճելի կդառնան,
Մարդը իրոք իր զարդարած պարտեզում տեր կդառնա:

Երբ չքանան ատելության և մախանքի խայթոցներ
Ու կամրջվեն ծիրանածագ արեգակի ճաճանչներ,
Ճշմարտության հրաշք ոգին երբ որ երկնի վեհ սրտեր,
Տիեզերքի չորս ծագերում կծնվեն սուրբ մանուկներ:

Երբ որ լռեն սարսռազդեցիկ շաչյունները զենքերի,
Փոշիանան շահամոլի անթաքչելի խոլ կրքեր,
Ու վերածվեն համընդհանուր եղբայրության իղձերի,
Տիեզերքի ոլորտներում չի ժայթքի թույն կարեվեր:

Երբ վերանա հրթիռների անզուսպ վազքը մոլեգնող,
Մարդկանց սրտերն անկեղծության սերտ կապերով միանան,
Մարդը մարդուն երբ որ դառնա անսուտ ընկեր հավերժող,
Տիեզերքի քառուղիներ մեկ ուղղություն կստանան:

Երբ սթափվեն խռովասեր ռազմամոլներ թմբիրից,
Ու հնչեցնեն եղբայրության, խաղաղության շեփորներ,
Նորակառույց միասնության հավատարիմ սրտերից
Տիեզերքում համատարած կիշխի մարդը անձնվեր:

Երբ հանդարտվեն ալիքները օվկիանոսի անհագուրդ,
Երբ պատկերվի ջինջ երկինքը ջրերի լույս հայելում.
Ու համբուրվեն երկինք ու ծով խաղաղության անձրևով,
Տիեզերքի շնչերակում կտիրի ՍԵՐ անխոով:

ԱՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ԲՈՅԱՋՅԱՆ